ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<< 11 >> 05 2012թ. N: 39 ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ <<ԳՅՈՒՄՐՈՒ ԹԻՎ 5 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ ՄԱՐԻՆԵ ԹԱՀՄԱԶՅԱՆԻՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 172-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով, հիմք ընդունելով Մարինե Թահմազյանի դիմումը և <<Բեռլին պոլիկլինիկա>> փակ բաժնետիրական ընկերության բժիշկ Գ.Ալթունյանի կողմից տրված AB N: 579044 անաշխատունակության թերթիկը.

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի <<Գյումրու թիվ 5 միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր տնօրեն Մարինե Թահմազյանին տրամադրել բարդ ծննդաբերության արձակուրդ՝ 2012 թվականի մայիսի 11-ից:
2. Արձակուրդի տևողությունը 85 օրացուցային օր՝ 2012 թվականի մայիսի 11-ից մինչև օգոստոսի 3-ը ներառյալ:
3. Արձակուրդի ընթացքում <<Գյումրու թիվ 5 միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել նույն դպրոցի փոխտնօրեն Գայանե Հովսեփյանին:

Ա.ԳԻՋԻՐՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է՝